

դարերէ վերջ Տաթեւացին զեռ կը վկայէր՝ թէ սգոյ ժամանակ Հայք կ'անցնէին «ի սով եւ ի ծարաւ»։ Կը մերկանան իրենց զգեստները, եւ զլինուն վրայ հող ցանած կը նստին (Հրց. 670)։ Ու տակաւին ժՁ դարուն Սիմ. Այրիվանեցին ողբալով Տրդատայ թախթը՝ կ'ըսէր. «Կանս կարդացէք՝ Կանք արտատուաց» (Այր. 368)։

14. — Հարսանիք: — Վարդան վրդ. կ'ուզէր՝ որ հարսանեաց խորհրդոյն պատրաստութեան համար՝ փեսային եւ հարսին բոլոր ընտանիքը կանխաւ «շարար մի պահօր» անցնեն բարեպաշտութեամբ: Եւ այնչափ ծանր կը համարէր այս պէտքը, որ եթէ չպահեն, կ'ըսէ, «կորուսին զպրսակն» (Քրգ.): Թերեւս արդէն սովորութիւն էր այդ, կամ թէ պատուիրողիդ սպաննալիքն իսկ կը թելադրէր պահել այդ հրամանը:

15. — Հասարակաց փտանգներ: — Թըշնամեաց աւերիչ յարձակմանց դէմ երկնից օգնութիւնը հայցելու համար՝ հաւատացեալք յատուկ պահք կը կարգէին: Յովսափատ՝ Հրէից արքայն՝ ի լուր Ասորոց գալստեան՝ բոլոր ժողովրդեան պահել հրամայեց (Բ Մնց. Ի, 3). եւ Եսթերի օրով երեք օր ծոմ բռնեցին՝ Պարսից ըս-